

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ 2012  
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ**

Մասնակցությամբ՝

- |   |               |
|---|---------------|
| ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ                  | Մ.Քարտաշյանի  |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ | Փ.Կարապետյանի |
| ՀՀ Արմավիրի զինվորական կոմիսարի տեղակալ՝      | Ս.Սարիբեկյանի |
| ՀՀ Էջմիածնի զինվորական կոմիսար՝               | Հ.Ազատյանի    |

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի  
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ '**

- 1. <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքից բխող տեղական  
ինքնակառավարման մարմինների խնդիրների մասին**  
/զեկ. Ս.Սարիբեկյան- ՀՀ Արմավիրի զինվորական կոմիսարի տեղակալ  
Հ.Ազատյան- ՀՀ Էջմիածնի զինվորական կոմիսար/
- 2. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների  
հավաքագրման արդյունքները առ 01.09.2012թ. դրությամբ**  
/Վ.Մկրտչյան-ՀՀ Արմավիրի մարզպետարանի  
աշխատակազմի ֆինանսական և  
սոցիալ -տնտեսական զարգացման վարչության պետ/
- 3. Հայտարարություններ**

Լ.Մուշեղյան

ՀՀ Արմավիրի մարզպետի հանձնարարությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզխորհրդի նիստը վարող ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Լ.Մուրադյանը մինչև օրակարգային հարցին անդրադառնալը մարզխորհրդի նիստի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Մ.Քարտաշյանին՝ շնորհավորելով նրան ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալի պաշտոնին նշանակվելու կապակցությամբ՝

ցանկանալով հետագա հաջողություններ նրա աշխատանքում: Լ.Մուրադյանը շնորհավորեց նաև սեպտեմբերի 9-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում նոր ընտրված և վերընտրված բոլոր համայնքների ղեկավարներին՝ մաղթելով նրանց աշխատանքային հաջողություններ:

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի տարածքային զինվորական կոմիսարի տեղակալ Ս.Սարիբեկյանը: Նա նշեց, որ մեր երկրի պաշտպանությունը բոլորիս պարտքն է և ելնելով ժամանակի պահանջներից, անհրաժեշտ է, որ բոլորս քաջ գիտակցենք և առավել ևս տեղեկացված լինենք մեր լիազորություններին և պարտականություններին: Տեղական ինքնակառավարման մարմիններն այս առումով ունեն բավականին լիազորություններ և պարտականություններ, սակայն դրանք լիարժեք չեն իրականացվում և դեռևս շատ անելիքներ կան: Նա անդրադարձավ «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին, որտեղ հստակ նշված են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները և լիազորությունները, որոնք հաճախ համայնքների ղեկավարների կողմից չեն իրականացվում, կամ էլ իրականացվում են թերություններով: Ս.Սարիբեկյանը տեղեկացրեց, նաև որ հիմնականում խնդիրները առաջանում են զորավարժությունների ընթացքում, մասնավորապես ընդգծելով, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ժամանակին և սահմանված ձևով համապատասխան զինվորական կոմիսարիատ ներկայացնել հաշվառման ենթակա անձանց ցուցակները, տրամադրել նրանց վերաբերյալ անհրաժեշտ տվյալները, ինչպես նաև համապատասխան զինվորական կոմիսարիատ ներկայացնելու մասին և զինապարտներին աշխատանքից կամ ուսումից՝ զինվորական ծառայության համար անհրաժեշտ ժամանակով ազատելու մասին համապատասխան տեղեկատվությունը:

Ս.Սարիբեկյանը հավելեց նաև, որ խնդիրներ են առաջանում հատկապես տեխնիկայի ձեռքբերման ժամանակ: Նա հորդորեց համայնքների ղեկավարներին զորավարժություններին վերաբերող բոլոր հարցերի և խնդիրների նկատմամբ լինել ավելի աջալուրջ և պատասխանատու, ինչպես նաև աշխատել գրանցամատյաններով՝ դրանք լրացնել ճիշտ և ժամանակին:

ՀՀ Էջմիածնի տարածքային զինվորական կոմիսար Հ.Ազատյանը ողջունելով ներկաներին նույնպես շնորհավորեց նորընտիր և վերընտրված համայնքների ղեկավարներին: Հ.Ազատյանը ելույթ ունենալով օրակարգային առաջին հարցի

կապակցությամբ, ևս մեկ անգամ անդրադարձավ <<Ջինապարտության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին, շեշտելով որ կան շատ խնդիրներ կապված զորահավաքների, զորավարությունների, գրանցամատյանների հետ: Նա ևս մեկ անգամ շեշտեց, որ անհրաժեշտ է զորահավաքային միջոցառումների և զորավարությունների նկատմամբ ցուցաբերել հետևողական և պատրաստական վերաբերմունք, քանի որ այն առնչվում է ամիջապես մեր պետության անվտանգությանը և գտնվում է ՀՀ Նախագահի անմիջական հսկողության ներքո և առաջիկայում նախատեսվում են ստուգումներ ՀՀ Նախագահի գլխավոր ռազմական տեսուչի կողմից:

Արմավիրի տարածքային զինվորական կոմիսարի տեղակալ Ս.Սարիբեկյանը և ՀՀ Էջմիածնի տարածքային զինկոմ Հ.Ազատյանը միաժամանակ փաստեցին, որ կան բազմաթիվ համայնքների ղեկավարներ, որոնք աշխատում են շատ բարեխիղճ և պատասխանատու և հնարավորինս իրականացնում են պետության կողմից իրենց վերապահված լիազորությունները: Նրանք ևս մեկ անգամ առաջարկեցին համայնքների ղեկավարներին՝ աշխատանքներ իրականացնել կցագրված անձանց ցուցակների ճշգրտման և համայնքներում փաստացի ապրող, ՀՀ-ից բացակայող անձանց վերադարձի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել համապատասխան զինկոմիսարիատ, որպեսզի զինկոմները տեղեկացված լինեն իրավիճակից: Նրանք միաժամանակ տեղեկացրեցին առաջիկայում կայանալիք զորավարությունների մասին:

- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանը անդրադառնալով քննակվող օրակարգային հարցին՝ նշեց, որ համայնքների ղեկավարները պարտավոր են համագործակցված աշխատել մարզի զինկոմիսարիատների հետ, խստորեն պահպանելով զորահավաքի և զորակոչային միջոցառումների հետ կապված գործառույթների կատարումը հաշվի առնելով, որ առաջիկայում համայնքների ղեկավարների և աշխատակազմի ղեկավարների լիազորություններում նախատեսվում են գաղտնիությանը առնչվող համապատասխան լիազորություններ:

Մարզխորհրդի նիստ վարող ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Լ.Մուրադյանը ամփոփոելով օրակարգային առաջին հարցը՝ առաջարկեց համայնքների ղեկավարներին լրջորեն գիտակցել քննարկվող հարցի կարևորությունը, աշխատելով համագործակցված և ամենայն պատասխանատվությամբ:

Օրակարգային երկրորդ հարցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը՝ ներկայացնելով մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները՝ առ 01.09.2012 թվականի դրությամբ: Նա տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը նախատեսված 1մլրդ 175մլն 430 հազար դրամի դիմաց կազմել են 850մլն 833 հազար դրամ, կատարողականը՝ 72.4%:

Հավաքագրման մակարդակը 2011թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.7 %-ով:

Վ.Մկրտչյանը ըստ համայնքների ներկայացրեց նշված ժամանակահատվածում սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները՝ առանձնացնելով 50 %-ից ցածր և 90 %-ից բարձր սեփական եկամուտների հավաքագրում ապահովված համայնքները /կցվում է/:

Վ.Մկրտչյանը ներկայացրեց նաև սեպտեմբերի 15-ի դրությամբ աշխատավարձերի և սոց. վճարների գծով ընթացիկ պարտքեր ունեցող համայնքների պարտքի չափը, որոնց վերաբերյալ համայնքների ղեկավարները ներկայացրեցին համապատասխան պարզաբանումներ:

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Լ.Մուրադյանը անդրադառնալով քննարկվող հարցին նշեց, որ ստեղծված իրավիճակն անընդունելի է և լուրջ խնդիր, որից ելնելով ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկեց ապահովել համայնքի բյուջեով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման բարձր ցուցանիշներ, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ մարելու կուրակված նախկին պարտքերը, չառաջացնելով նոր պարտքեր՝ հետագայում բացառելով նման իրավիճակը:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո հայտարարությունով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի պետ Լ.Մուշեղյանը:

Լ.Մուշեղյանն իր հայտարարությամբ նշեց, որ մարզի տարածքում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու նպատակով անհրաժեշտ է, որ համայնքների ղեկավարներն ամենայն պատասխանատվությամբ մարզպետարան

ներկայացնեն տեղեկատվություն իրենց համայնքում իրականացվող ցանկացած ծրագրի վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով անհատական ներդրումային ծրագրերի վրա:

Միաժամանակ նշվեց, որ համապատասխան տեղեկատվությունը անհրաժեշտ է ներկայացնել ծրագրի ավարտից անմիջապես հետո՝ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման, ինչպես նաև հայտարարության ավարտից հետո << Արմավիրի մարզպետի տեղակալ Լ.Մուրադյանը մարզխորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝**



**Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**Արձ.՝ Մ.Առուշանյան**